«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՍԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հաստատություն՝ *«Զորագյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ*

Դաստիարակ՝ *Ալիսա Մովսիսյան*

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

Երևան 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ I ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀՈՒՄ

1.1 Երեխան որպես իրավահարաբերությունների հատուկ սուբյեկտ.....5

1.2Երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման ներպետական համակարգը.....7

Գլուխ II ՍԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1 Պարապմունքի պլանը.....16

2.2 Պարապմունքի ընթացքը.....16

2.3. Դիտորդների դիտարկումներ.....21

ԵԶԱՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....23

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

Ներածություն

ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կարևոր առաջընթաց է սույն օրենքով ամրագրված՝ Պաշտպանի և նրա աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց կամ կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության համար ավելի բարձր երաշխիքների ստեղծումն ու այդ գործունեությանը խոչընդոտելու համար քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելը: Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեության և, մասնավորապես, երեխայի իրավունքների պաշտպանության նպատակով իրականացվող ծրագրերի իրագործման ընթացքում ՀՀ Մարդու իրավուքների պաշտպանը մշտապես համագործակցում է այդ ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների հետ: Այդ համագործակցությունը նպաստում է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համալիր մոտեցումների կիրառմանը, փորձի և ստացված տվյալների փոխանակմանը:Երեխաների իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը մեր օրերում պետահիրավական կարևորագույն հիմնահարցերից մեկն է: Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես եղել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը: **Երեխաները ցանկացած պետության յ հասարակության ապագան են** և նրանից, թե որքանով են պաշտպանված նրանց իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը, կախված է նաև հասարակության ապագան: Ինչպես ցանկացած քաղաքակիրթ պետություն, որն իր առաջնահերթ գործառույթներից է համարում հասարակության անչափահաս անդամների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետությունը ևս հոգատարություն է դրսևորում իր ապագա քաղաքացիների բարոյապես, ֆիզիկապես, մտավոր ճիշտ զարգացման ու դաստիարակության հանդեպ: Քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններն ուղիղ համեմատական են երեխաների կարգավիճակին: Պատահական չէ, որ մեր երկրի անկախացումից հետո ընկած ժամանակաշրջանում պետությունն առավել մեծ ուշադրություն է դարձնում ընտանիքի և երեխայի շահերի պաշտպանությանը՝ կատարելագործելով օրենսդրական դաշտը՝ հիմք ունենալով միջազգային-իրավական մի շարք փաստաթղթեր:

chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.unicef.org/armenia/media/2026/file

Չնայած այս ոլորտում մեծ թվով իրավական ակտերի առկայությանը, որոնք երաշխավորում են երեխայի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության, օրինական շահերի ապահովումը, այնուամենայնիվ նրանց իրական պաշտպանվածության աստիճանը չի կարելի գնահատել բավարար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել երեխայի՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի առանձնահատկությունները, երեխաների իրավունքների ու ազատությունների ապահովման որակն ու պաշտպանության աստիճանը ժամանակակից պայմաններում: Երեխաների իրավունքներն ու ազատությունները, պետական մակարդակով նրանց ապահովման ու պաշտպանության հետ կապված հարցերը, չնայած դրանց տեսական ու գործնական նշանակությանը, հայկական իարվագիտության, ինչպես նաև մանկավարժության հատուկ հետազոտության առարկա չեն դարձել: Նշված աշխատություններում հիմնահարցի միայն այս կամ այն կողմերը հետազոտվել են 1 Է. Գրինի, Ա. Երիցյանի, Վ. Այվազյանի, Ա. Առաքելյանի, Գ. Հարությունյաի, Ա. Թոփուզյանի և այլոց:

2 Առկա բոլոր ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են միայն երեխայի առանձին իրավունքների կամ հիմնահարցերի ուսումնասիրմանը, այլ ոչ թե նրանց ամբողջական լուսաբանմանը կամ էլ երեխայի իրավական կարգավիճակն ուսումնասիրել են որպես իրավունքի՝ մեծահասակ սուբյեկտների իրավական կարգավիճակի բաղկացուցիչ մաս: **Հետազոտության վարկածը**: Երեխաների իրավունքներն ու ազատությունները, օրինական շահերի պաշտպանվածությունն արդյունավետ կլինեն, եթե.

- ՀՀ-ում իրականացվեն օրենսդրական կարգավորումներ՝ ուղղված երեխայի իրավական կարգավիճակի ամրապնդմանը.
- Երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել արդյունավետ դարձնելու համար ստեղծվի երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտ՝ հիմնված ինքնավարության, անկախության, անկողմնակալության, թափանցիկության արդարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա.
- Երեխայի հետ առնչվող մասնագիտական հաստատությունների աշխատակիցների հատուկ մասնագիտական և հոգեբանական գիտելիքների տիրապետման և համապատասխան պատրաստվածության ապահովում:

file:///C:/Users/user/Downloads/%D5%A1%D5%A1%D5%AC.pdf

ԳԼՈՒԽ Ի. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

1.1 Երեխան որպես իրավահարաբերությունների հատուկ սուբյեկտ

Դեռևս մանկությունից յուրաքանչյուր մարդ դառնում է իրավունքների ու ազատությունների որոշակի մի ամբողջության կրող: Սակայն մինչև նախորդ հարյուրամյակի կեսերը երեխան չէր դիտարկվում որպես իրավունքի սուբյեկտ: Դրա ապացույցն են 20-րդ դարի հայտնի մտածող Մարիա Մոնտեսորիի ուսումնասիրությունները, որտեղ նշում է, որ «Երեխան մեծահասակի վերարտադրությունն է, որը տնօրինում է նրան այնպես, ասես երեխան լինի իր սեփականության մի մասը:,, Ստրուկը երբեք այդպես չի պատկանել իր տիրոջը, ինչպես երեխան ծնողներին,, [5, էջ 90-91]: Պատմությունը ցույց է տալիս, որ երջանիկ մանկության մասին կարգախոսները, որոնք ամրագրված չեն իրավական ակտերով, հիմնված չեն պետության ուժեղ և արդար քաղաքականության վրա և չեն ստանում նյութական և ֆինանսական աջակցություն՝ որպես աճող սերնդի բնականոն կենսագործունեության գրավականներ, այդպես էլ մնում են դատարկ բարձրագոչ խոսքեր: Ի տարբերություն ազգային իրավունքի՝ միջազգային իրավունքի նորմերով ավելի վաղ են ամրագրվել հասարակության առավել խոցելի խմբերի պաշտպանությանն ուղղված միջոցներ՝ բոլոր նրանց համար, ովքեր զուրկ են իրենց իրավունքները պաշտպանելու իրական հնարավորություններից: Այդ խմբին առաջին հերթին դասվում են երեխաները: Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո Ազգերի Լիգայի շրջանակներում ստեղծվեց երեխաների մասին հոգածության Միջազգային ասոցիացիան: 1924թ.-ին ընդունվեց Երեխայի իրավունքների Ժնևյան հռչակագիրը: 1945թ.-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հիմնեց Մանկական ֆոնդ (ՅՈՒՆԻՍԵՖ): 1959թ.-ին ՄԱԿ-ի կողմից ընդունվեց Երեխայի իրավունքների հռչակագիրը: Հատկանշական է այն, որ 1924թ.-ի 7 հռչակագրում նկատվում էր երեխաներին՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտ համարելու միտում: 1989թ.- նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը, 1990թ-ին նրա կողմից ընդունվեց նաև երեխաների

//www.wvi.org/armenia/youth-empowerment:

իրավունքների պաշտպանության և զարգացման ապահովման մասին համաշխարհային հռչակագիրը, 2002թ.-ին Նյու Յորքում գումարվեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանը, որը բացառապես նվիրված էր երեխաների հիմնախնդրին: Այն առաջ քաշեց «Կառուցենք երեխաների կյանքի համար պիտանի աշխարհ», «Կրթության և առողջապահության ոլորտներում ներդրումները կայուն զարգացման հիմք են», «Կրթությունը ներդրում է և ոչ թե սպասում», «Մանկության զարգացումից դեպի մարդկության զարգացում» և այլ կարգախոսներ: Այս ամենով հանդերձ **ամրացվեց երեխայի՝ որպես հատուկ սուբյեկտի կարգավիճակը**: Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը ստեղծեց երեխայի նկատմամբ վերաբերմունքի նոր մոդել, որը ելակետ հանդիսացավ ընտանիքում և հասարակության մեջ երեխայի կարգավիճակի փոփոխության համար: Այդ առնչությամբ հետաքրքրական է հետևյալ միտքը, որ ժամանակակից իրավագետներից և ոչ մեկն այլևս չի վիճարկում այն փաստը, որ **երեխան հանդիսանում է իրավունքների ու ազատությունների ինքնուրույն կրող,** հետևաբար՝ իրավունքի հատուկ սուբյեկտ [6, էջ 21]: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նշել է, որ,, մենք պետք է լսենք երեխաների ձայնը և ապահովենք նրանց մասնակցությունը: Երեխաները և պատանիները ստեղծագործող քաղաքացիներ են և ընդունակ են մեծերին օգնել՝ բոլորի համար ավելի լավ ապագա կառուցելու գործում: Մենք՝ մեծերս պետք է հարգենք նրանց կարծիք հայտնելու իրավունքը և իրենց կյանքին վերաբերող բոլոր հարցերի լուծմանը մասնակցելու իրավունքը՝ ելնելով նրանց տարիքից և հասունության մակարդակից,, [3, 16 էջ]: Ասվածը հանգեցնում է նրան, որ պետք է հաղթահարվեն երեխաների իրավունքներին վերաբերող փաստաթղթերը և դառնան գործ: ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության պաշտպանության և հովանավորության ներքո: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը և ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանիքում երեխայի դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից [4, էջ 546]: Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվեցիան Հայաստանը վավերացրել է 1992թ.-ի հունիսի 1-ին: Այն մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ կրթության գործընթացի հումանացման գործում:

ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», Պրեամբուլա, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503

Կոնվեցիան, ի տարբերություն երեխաների իրավունքների նախկին փաստաթղթերի, իրավականորեն պարտավորեցնող գործիք է և ստորագրող երկրների կառավարություններին պարտավորեցնում է կարևորել երեխաների հիմնահարցերը: Այն ընդգծում է, որ մանկությունն անպաշտպան է և մեծերի օգնության ու աջակցության կարիք ունի, ուստի ավագները պատասխանատու են երեխաների ճակատագրի համար, և կոչ է անում հաշվի առնել, որ մարդու զարգացումն ու կայացումը տեղի են ունենում հենց մանկության տարիներին: Կոնվեցիայում շարադրվում են նաև հատուկ կարիք ունեցող երեխաների իրավունքները, մեծ տեղ է տրվում դպրոցական կարգապահությանը՝ որպես երեխաների անվտանգության երաշխիք: ՀՀ-ում «Երեխաների իրավունքների մասին» օրենքն ընդունվել է 1996թ. մայիսի 21- ին: Օրենքը մի կողմից սահմանում է երեխայի իրավունքները, մյուս կողմից ամրագրում է պետության, համապատասխան մարմինների, քաղաքացիների պարտականությունները երեխաների իրավունքների ուազատությունների պաշտպանության բնագավառում: Մասնավորապես օրենքն ամրագրում է երեխայի կյանքի, անվան և քաղաքացիության, առողջության պահպանման, անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու, բռնությունի ցերեխաների պաշտպանության, երեխաների մտքի, խղճի ազատության, կրթության, ընտանիքում ապրելու, ընտանիքում երեխաների իրավունքները պաշտպանելու, բնակության տարածության, ժառանգություն ստանալու, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, աշխատանքի, հանգստի, միավորումներին անդամակցելու, անվտանգության ապահովման, պատվի և արժանապատվության պաշտպանության և այլ իրավունքներ: Այսպիսով, օրենքը կյանքի բոլոր ոլորտներում երեխայի շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրական նորմ է, որտեղ երեխան իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է, և, քանի որ, ի տարբերություն մեծերի, հատուկ պաշտպանության կարիք ունի, ուստի պետությունը ոչ միայն սահմանում է հատուկ իրավունքներ, այլ տալիս է դրանց իրականացման համար հատուկ երաշխիքներ:

1.2 Երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման ներպետական համակարգը

ՀՀ-ում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներով: Երեխաների իրավունքների

պաշտպանության հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի նպատակն է նպաստել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը:

Ազգային հանձնաժողովի առջև առաջադրված խնդիրներն են.

• Աջակցել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգին.

•Աջակցել երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշտակման ապահովմանը.

•Վերլուծել երեխային. յուրաքանչյուր երեխայի մեջ՝ անկախ զարգացման առանձնահատկություններից տեսնել լուսավոր և ուժեղ կողմերը.

• Աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանը.

• Աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանը: Մարզային մակարդակում գործում են ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները (Երևան քաղաքում՝ քաղաքապետարանում), որոնց խնդիրներն ուղղված են.

• ապահովել ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը մարզում.

• աջակցել ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովմանը.

• ապահովել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանությունը և կանխարգելել նման իրավիճակում նրանց հայտնվելը.

• մշակել ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրեր և ապահովել դրանց կատարումը.

• մշակել հակասոցիալական վարք դրսևորած և իրավախախտ անչափահասների համար այլընտրանքային /վերականգնողական/ արդարադատության ծրագրեր և ապահովել դրանց կատարումը: Համայնքային մակարդակում գործում են խնամակալության և հոգաբարձության մարմինները, որոնք ղեկավարում են համայնքապետերը, իսկ Երևանում՝ լիազորությունները քաղաքապետի անունից

իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները: Խնամակալության և հոգաբարձության մարմինների առջև դրված խնդիրներն են.

• երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.

• երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը.

• կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը, ինչպես նաև ՀՀ օրենքով նախատեսված այլ խնդիրներ[1, էջ 39-46]: Այսպիսով՝ ներպետական կազմակերպա-կառավարչական մակարդակներից յուրաքանչյուրը կոչված է ապահովելու այն հիմնական եղանակներն ու միջոցները, որոնք միտված են երեխայի արժանապատիվ գոյությանը: Այնուամենայնիվ, չնայած երեխաների իրավական կարգավիճակի ամրապնդմանն ուղղված բազմաթիվ դրույթների ամրագրմանն իրավունքի տարբեր և ՀՀ-ում առկա երեխաների պաշտպանությամբ ու իրավունքների ապահովմամբ զբաղվող ենթակառուցվածքների գոյությանը, մենք շարունակում ենք բախվել երեխաների իրավունքների խախտումների մասին վկայող բազմաթիվ փաստերի հետ: Այսօր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի թվով 6 հաստատություն/մանկատուն/ 3 ընդհանուր տիպի մանկատուն և 3 մասնագիտացված մանկատուն, որտեղ խնամվում է շուրջ 731 երեխա, այդ թվում՝ 506-ը՝ մասնագիտացված մանկատներում: Նախարարության համակարգում գործում է երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատություն, որոնք իրականացնում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաների խնամքի և պաշտպանության :Գիշերօթիկ հաստատություններում խնամվում են սոցիալապես ընտանիքների շուրջ 750 երեխա [14]: Վերոնշվածները վկայում է այն մասին, որ պետությունը երեխաների խնամքի նման հաստատությունների ստեղծմամբ միջոցներ է ձեռնարկում երեխաների սոցիալական խնդիրների լուծման համար, սակայն երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման և շուրջօրյա հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման նպատակով ոչ պակաս կարևորություն է ներկայացնում երեխայի շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից երեխաների բեռնաթափման և դեպի այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման գործընթացը:

Պատճառն այն է, որ մանկատան միջավայրը բացասաբար է անդրադառնում երեխայի բարոյահոգեբանական և զգացմունքային վիճակի ու նրանց սոցիալականացման գործընթացի վրա: Այս առումով ցանկալի կլիներ, գործեր այլընտրանքային սոցիալական ծրագրեր, որոնցից օգտվելով ընտանիքը, կկարողանար կայունացնել ֆինանսական վիճակը, և երեխաներին կընձեռվեր ընտանեկան միջավայրում ապրելու և դաստիարակվելու հնարավորություն: Չի կարելի բավարար համարել նաև երեխաների շահերի պաշտպանության մակարդակը քրեաիրավական ոլորտում: Ֆիզիկական և սեռական բռնությունը, մուրացկանությունը, թափառաշրջիկությունը, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործումը, մանկական պոռնոգրաֆիան անցանկալի, խայտառակ հակասոցիալական երևույթներ են, ցավոք ունեն լատենտայնության/թաքնվածության/ բարձր մակարդակ, տուժածներն էլ անչափահասներն են, որոնք կամ չեն գիտակցում իրենց նկատմամբ գործողությունների հանցավոր բնույթն ու չեն բարձրաձայնում դրա մասին, կամ իրենք կամ իրենց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները շահագրգռված են, որպեսզի չբացահայտվեն նման դեպքերը: Դրանց դեմ պայքարը պահանջում է ծայրահեղ զգոնություն և օպերատիվություն: Նախադպրոցական հաստատություններում երեխաների իրավունքներն իրականացնելիս պետք է գիտակցել, որ և **ոչ թե մանկությունը երեխայի կյանքն է այլ կյանքին նախապատրաստելու ժամանկաշրջան:** 21-րդ դարն անընդհմեջ խնդիրներ է դնում մարդկության առջև, Ա. Թոփուզյանի գնահատմամբ դրանցից կարևորագույնը երեխաների համար աշխարհ կառուցելու խնդիրն է, այսինքն՝ երեխաների իրավունքների պաշտպանությունը նոր իմաստ է ստանում, ուստի անհրաժեշտ է հստակեցնել և զարգացնել այդ բնագավառի իարվական դաշտը[2, էջ 165]: Այսպիսով, երեխաների իրավունքների ու ազատությունների ճանաչումն ու պաշտպանությունը մշտապես կան ու մնում են դաստիարակությունը հումանացնելու գլխավոր սկզբունքներից մեկը: **Պաշտպանված, հարգված, արժանապատվությունը կարյորված, արդարությունը ճաշակած, լսելի եղած երեխան երկրի առաջընթացի գրավականն է:** Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտմ ուղենիշային դեր ունի «ՀՀում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021թթ. ռազմավարական ծրագիրը»[9], որի շրջանակներում կարևորվում է երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը, երեխաների որակյալ ծառայություններ մատուցելը, նրանց իրենց վերաբերող հարցերի քննարկմանը մասնակից դարձները: Սակայն, երեխաների իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության բնագավառում առկա են չհստակեցված խնդիրներ և բազմաթիվ բացթողումներ.

• ՀՀ օրենսդրության մեջ կան դրույթներ, որոնք չեն բխում երկրի սոցիալտնտեսական պայմաններից՝ խոչընդոտելով երեխաների իրավունքների լիակատար իրացմանը:

• Շարունակվում են ալկոհոլի, ծխախոտի գովազդները, մարդկային արժանապատվությունը նվաստացնող, բռնությունը, անբարոյականությունը քարոզող տեղեկատվության տարածումը:

• Առաջնային է մնում երեխաների կրթության որակի մատչելիության և հավասար հնարավորություններ ապահովելու խնդիրը:

• Դեռ ցածր են երեխաների իրավունքների ու ազատությունների, օրիանական շահերի վերաբերյալ ծնողների, մանկավարժների գիտելիքների մակարդակն ու պատրաստվածությունը:

• ՀՀ-ում երեխաները շարունակվում են դիտարկվել մեծահասակների կցորդ և մասնակից չեն իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը: Երեխան պետք է հետաքրքրություն դրսևորելու, հարցեր տալու և պատասխաններ ստանալու, ինքն իրեն ստուգելու և սխալներ գործելու, իմանալու և չիմանալու, ստեղծագործելու և անմիջական լինելու, հարգվելու իրավունք ունենա:

• Իրավական որոշ բացեր են առկա երեխաների առողջապահական, քաղաքական, սոցիալական պաշտպանության իրավունքների իրացման ոլորտներում և այլն: Խնդիրները, բացթողումները մասնակիորեն պակասեցնելու համար առաջարկում ենք մշակել երեխայի հետ առնչվող մասնագիտական հաստատությունների աշխատակիցների՝ հատուկ մասնագիտական և հոգեբանական գիտելիքների տիրապետման և համապատասխան պատրաստվածության ապահովման համար չափորոշիչներ, դասընթացներ: Իսկ երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկում ենք ստեղծել երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտ՝ հիմնված ինքնավարության, անկախության, անկողմնակալության, թափանցիկության արդարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա:

Երեխաների իրավունքների պաշտպանության հիմքում ընկած է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, որի համաձայն երեխաների շահերը գերակա արժեք են: Այսպես, ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված է. «**Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում**

երեխայի լավագույն շահերին»4: Նույն իրավունքից օգտվում են ազատազրկված, հատուկ հաստատություններում հայտնված երեխաները, որոնք լավագույն շահը նույնպես պետք է պետության և համապատասխան հաստատությունների կողմից երաշխավորված լինի:Պետք է գործադրեն բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Նշվածն, ըստ էության, ներկայացնում է լսված լինելու իրավունքը, որից էլ ածանցվում է իրավունքների խախտումների վերաբերյալ բողոք ներկայացնելու իրավունքը, որը տարբեր կերպ է իրացված Կոնվենցիայի մասնակից երկրներում: Օրինակ՝ փակ հաստատություններում գտնվող երեխաները պետք է հնարավորություն ունենան բարձրաձայնելու այն դեպքերի մասին, երբ խախտվում են իրենց իրավունքները: Երեխաների կողմից իրենց իրավունքների խախտման մասին բողոք ներկայացնելը լսված լինելու իրենց իրավունքի իրականացման ձևերից մեկն է: Այս առումով, պետական յուրաքանչյուր վերաբերելի մարմնին բողոք ներկայացնելով՝ երեխան բացի այլ իրավունքներից, իրացնում է իր՝ լսված լինելու իրավունքը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն իր՝ Բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իավունքի վերաբերյալ թիվ 13 Ընդհանուր մեկնաբանության մեջ նշել է, որ, **պետությունները պետք է ունենան երեխաների պաշտպանության՝ անվտանգ յ պատշաճ հրապարակված մեխանիզմներ, որպեսզի երեխաները յ այլ անձիք կարողանան ահազանգել, երբ երեխայի նկատմամբ բռնության դեպք է տեղի ունենում**: Կոմիտեն նշել է նաև, որ շուրջօրյա հեռախոսահամարի գործելը կարող է լինել այդ մեխանիզմներից մեկը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների թիվ 12 Ընդհանուր մեկնաբանության համաձայն7՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները պետք է հարգվեն հետևյալ 9 սկզբունքները.

1. <u>Թափանցիկություն</u> և տեղեկացվածություն. Երեխաները պետք է տեղեկացված լինեն իրենց լսված լինելու իրավունքի վերաբերյալ:
2. <u>Կամավորություն</u> . Երեխային չպետք է պարտադրել, որպեսզի նա հայտնի իր կարծիքը:
3. <u>Հարգանք.</u> Երեխայի կարծիքը պետք է հարգել:
4. <u>Վերաբերելիություն.</u> Երեխայի հայտնած կարծիքը պետք է իրական կապ ունենա իր կյանքի հետ: Ավելին, երեխան պետք է կարողանա հայտնել իր կարծիքը այն խնդիրների մասին, որոնք հենց իր կարծիքով կարևոր են իր համար:

5. Երեխայակենտրոն միջավայր և աշխատելու մեթոդներ. Երեխաների հետ աշխատելու մեթոդները պետք է լինեն երեխաների համար հարմարեցված, քանի որ երեխաներն ունեն տարբեր կարիքներ և նրանք պետք է պատրաստ լինեն, որպեսզի կարողանան արտահայտել իրենց կարծիքը:

6. Ներառականություն . Երեխայի մասնակցությունը պետք է լինի նեռարական, այսինքն՝ պետք է բացառվի ցանկացած տեսակի խտրականություն: Երեխաները մեկ ընդհանուր խումբ չեն և նրանք պետք է ունենան հավասար հնարավորություններ՝ իրենց անհատականությունը հաշվառված պիտի լինի:

7. Երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստում. Երեխաների հետ աշխատող անձիք պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան ճիշտ շփվել երեխաների հետ: Այս հարցում հենց երեխաների մասնակցությամբ վերապատրաստումը կարող է արդյունավետ լինել:

8. Անվտանգության ապահովում . Երեխան իր կարծիքը արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա, եթե նա խոսի իրեն հուզող հարցերից:

9. Հետևողականություն .Ցանկացած խորհրդատվական գործընթաց պետք է լինի հետևողական և երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես իրենց կարծիքը լսեցին և հաշվի առան: 1993 թվականին, Կոնվենցիայի վավերացմամբ, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց իր օրենսդրությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի դրույթներին: Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը նաև ճանաչեց, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում և լիարժեք պաշտպանված լինի:

http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf 7_Երեխայի լսված լինելու հարվունքը, Երեխայի իրավունքների կոմիտե, 2009 թվական,

http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf

Երկրի բարեկեցության ամենակարևոր նախադրյալն երեխաների շահերին նպատակաուղղված պետական քաղաքականությունն է: Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում: Մասնավորապես, այդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: 1996 թվականին ՀՀ-ում ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը նպաստեց, որպեսզի ՀՀ-ում ձևավորվի երեխաների իրավունքների պաշտանության համակարգը: Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության իրականացման և համակարգման առումով կարևորագույն ձեռքբերումներից է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի ստեղծումը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: ՀՀ-ում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքն ամրագրված է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով: Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները պետք է նպաստեն ընտանիքի վերամիավորմանը: Այնուամենայնիվ, չնայած վերը նշված համակարգի ստեղծմանը՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում դեռևս կան խնդիրներ, որոնց մասին նշվել է թե՛ մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների, թե՛ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն դեռևս 2013 թվականին իր ամփոփիչ դիտարկումներում նշել է, որ մտահոգության տեղիք տվող խնդիրներից է նախևառաջ օրենսդրությունը:

Կոմիտեն առաջարկել է նաև, ունենալ Երիտասարդական պառլամենտ և խթանել երեխաների մասնակցությունը պառլամենտում: Հաշվի առնելով իր իսկ թիվ 2 ընդհանուր

մեկնաբանությունը մարդու իրավունքների անկախ կառույցների դերի մասին երեխայի իրավունքների պաշտպանության և խթանման գործում՝ Կոմիտեն խորհուրդ է տվել նաև քայլեր ձեռնարկել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ստեղծման ուղղությամբ: Վերոգրյալ մեկնաբանությունում նշված է նաև, որ յուրաքանչյուր պետություն պետք է ունենա **մարդու իրավունքների անկախ կառույց, որն էլ իր հերթին կունենա երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման լիազորություն:**

chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.unicef.org/armenia/media/2026/file

Գլուխ II ՍԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1 Պարապմունքի պլանը

- 1. **Արձանագրող փուլ**
- Պարապմունքն անց է կացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղի մանկապարտեզի միջին խմբի 30 սաների հետ:
- Արձանագրող փուլի նպատակն է երեխաներին ծանոթացնել իրենց իրավունքների և պարտականությունների հետ:

2. **Ձևավորող փուլ** :Ձևավորող <u>փուլի նպատակն է</u> զարգացնել երեխաների ճանաչողական գիտելիքները իրենց իրավունքների ու պարտականությունների մասին:

3. **Պարապմունքի պլան** :Պարապմունքի թեման է «Իմ իրավունքները և պարտականությունները»:

Պարապմունքի նպատակները են.

1. Երեխաների մեջ տարրական պատկերացում ձևավորել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին.
2. Զարգացնել երեխաների՝ քերականորեն ճիշտ, կապակցված խոսքը, հարստացնել և ակտիվացնել բառապաշարը՝ իրավունք, պարտականություն, օթևան.
3. Զարգացնել միջանձնային և ներանձնային հարաբերությունները.
4. Դաստիարակել ինքնուրույն որոշում կայացնելու, դժվար պահին կողմնորոշվելու, կարևորն ու երկրորդականը տարբերելու կարողություն: Անհրաժեշտ նյութեր են՝սյուժետային նկարների հավաքածու: Պարապմունքի նախապատրաստում՝

Օդափոխել պարապմունքի անցկացման վայրը, աթոռակները դասավորել գորգի շուրջը:

2.2 **Պարապմունքի ընթացքը**

Դաստիարակը նատեցնում է երեխաներին և երեխաների ուշադրությունը հրավիրում է դեպի Էմիլիին, երեխաները փորձում են ուշադիր լսել Էմիլիին: Էմիլին

խնդրում է, որ երեխաները նկարագրեն իրենց արտաքին տեսքը՝ միևնույն ժամանակ նշելով անունը, ազգանունը, հայրանունը:

Դաստիարակը բացատրում է երեխաներին իրենց իրավունքների մասին

Այս պարապմունքից հետո

Դաստիարակը առաջարկում է կատարել մատիկների վարժանք.

- Ապա նայիր քո մատներին,
- Քեզ նման նրանք ունեն
- Իրենց հատուկ անունները
- `Հաստ ու կարճ է բթամատը,
- Ցույց է տալիս ցուցամատը,
- Միջնամատը շատ երկար է ,

- Մատնեմատը քիչ տկար է,
- Եվ ճկույթը այս փոքրիկ,
- Ահա դարձավ մի թաթիկ
- Այնուհետև Էմիլիին դաստիարակը հրավիրում է իր տեղը:
- Դաստիարակը ավելացնում է , որ յուրաքանչյուր մարդ առանձնահատուկ է և ունի իր սիրելի զբաղմունքը:

-Դուք ինչո՞վ եք սիրում զբաղվել:

Երեխաների պատասխաններ

- Այնուհետև դաստիարակը արժանացնում է հավանության երեխաների պատասխանները և ասում, որ յուրաքանչյուր մարդ ունի հայրենիք, որտեղ կարող է ապրել ազատ և ապահով, լինել պաշտպանված:
- Դաստիարակը հարցեր է տալիս երեխաներին և ստանալով պատասխանները ,ցուցափայտով ցույց է տալիս պաստառի վրա :
- – Ովքե՞ր են մեզ շրջապատող մարդիկ, որոնք ցանկանում են մեզ օգնել:Երեխաների պատասխանները.



- Ֆիզկուլտ դադար – Շարժախաղ ,,Հասիր գնդակի հետևից‘‘

Երեխաները կանգնում են զույգերով ,դաստիարակը գցում է գնդակը 3մ հեռուն ,իսկ զույգ կանգնած երեխաները կփորձեն շուտ հասնել գնդակին;

Զարգացնում է ճարպկությունը:

Խաղ- ՝,, Ճիշտ թե սխալ,,

2.3.Դիտորդների դիտարկումներ

- Դաստիարակը պարապմունքը անցկացրեց անկաշկանդ և ուրախ մթնոլորտում:Նա կարողացավ ընտրված թեման հասանելի դարձնել երեխաներին: Որպես պարապմունքի ամփոփում՝ երեխաներն իրենց ձեռք բերված գիտելիքները ամփոփեցին խմբային և ենթախմբերով աշխատանքի միջոցով: Դիդակտիկ և ուսումնական հարուստ նյութերով: Պարապմունքը հասանելի էր և ձևաչափով, և կատարված տարատեսակ աշխատնքներով:
- Դիտորդներ – Տնօրեն, դաստիարակի օգնական ,միջին խմբի դաստիարակ: Այսպիսով, անցկացնելով պարապմունքը՝ եկանք այն եզրակացության, որ նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա պարտավոր է իմանալ իր

իրավունքները ու պարտականությունները: Եվ մենք՝ մանկավարժներս, ոչ մի դեպքում չպետք է ոտնահարենք երեխաների իրավունքները:

- Խաղ «Ճիշտ–սխալ» խաղի միջոցով ամրապնդում գիտելիքները իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

ԵԶԱՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Երեխային որպես իրավունքի առանձին սուբյեկտ դիտարկելու դեպքում է, որ արժանի տեղ և դեր ենք հատկացնում նրան հասարակության և պետության մեջ, բացահայտում տվյալ հատուկ խմբի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավական կարգավիճակը:
2. Նախադպրոցական հաստատություններում երեխաների իրավունքներն իրականացնելիս պետք է գիատակցել, որ մանկությունը ոչ թե երեխայի կյանքն է այլ կյանքին նախապատրաստելու ժամանկաշրջան:
3. Երեխաների իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանությանն առնչվող խնդիրները, բացթողումները մասնակիորեն պակասեցնելու համար առաջարկում ենք մշակել երեխայի հետ առնչվող մասնագիտական հաստատությունների աշխատակիցների՝ հատուկ մասնագիտական և հոգեբանական գիտելիքների տիրապետման և համապատասխան պատրաստվածության ապահովման համար չափորոշիչներ, դասընթացներ:
4. Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա պարտավոր է իմանալ իր իրավունքները ու պարտականությունները: Եվ մենք՝ մանկավարժներս, ոչ մի դեպքում չպետք է ոտնահարենք այն:

5. Վերջնարդյունք մանկավարժական հետազոտության վերլուծությունը թույլ տվեց պարզել, որ երեխաների սոցիալական պաշտպանության ժամանակակից տեսանկյունով կազմակերպումը բավականին բարդ գործընթաց է: Հետազոտությունը բացահայտեց երեխաներին իրենց իրավունքները սովորեցնելու նոր ռազմավարություններ և մարտավարություններ: Մանկավարժական հետազոտությունները ապացուցում են, որ ավելի մեծ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական պաշտպանության արդյունավետ կազմակերպումը հնարավոր է մանկավարժական մի շարք պայմանների դեպքում: Այս պայմաններն են.

• անհատի ստեղծագործական ինքնազարգացման համար առարկայական զարգացող միջավայրի ստեղծում.

• կրթական գործունեության պլանավորում;

• անհատականության վրա հիմնված մանկավարժական աջակցություն

chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://lib.armedu.am/files/resource/files/20212-27/c8a60b5df09c07742e3499bf94e22aea.p

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եկեք սովորենք երեխայի իրավունքները/Ուղեցույց ուսուցիչների համար/, Երևան, 2001:
2. Թոփուզյան Ա., Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ, 21-րդ ԴԱՐ, թիվ 3 (21), 2008:
3. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները պաշտպանության ոլորտում /Իրավական վերլուծություն/, Երևան, 2017, 71 էջ:
4. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները պաշտպանության ոլորտում /Իրավական վերլուծություն/, Երևան, 2017, 71 էջ:
5. Богуславский М.В., Корнетов Г.Б., Антология гуманной педагогики, М., 1999.
6. Кобилова С.А., Леонтьева Е.А., Права ребенка и гарантии их защиты в международном и российцком законодетельстве. Публичное и частное право: проблемы развития и взаимодействия, законодательного выражения и юридической практики: Материалы Всероссийской научно-практической конференции. Екатеринбург, 1999.
7. Նախադպրոցական կրթության մասին օրենք
8. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին
9. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական Ծ 681 չափորոշիչներ/ ՅՈՒՆԻՍԵՖ – Վերանայված հրատարակություն.- Եր.: Ասողիկ, 2019. – 196 էջ:
10. Երեխաների պաշտպանություն:Ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար / Անտոնյան Միրա, Կարապետյան Արմինե, Դուրյան Նելլի, Խաչատրյան Արտակ, Հովհաննիսյան Արթուր, Սարգսյան Սերգեյ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ /UNICEF / և ,,

Հայաստանի մանուկներ,, բարեգործական հիմնադրամ /COAF/ ,2009. 316 էջ: